ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Աբովյան 52ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52ª • 52ª Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Իվ 6

ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2024 Թ. ԱՊՐԻԼԻ 4 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների ընթացքը (զեկուցող՝ Ա. Սարգսյան)։
2. Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվությունը։
3. Ընթացիկ հարցեր։

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 29-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ արդեն 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները մեկնարկել են նորմալ, ընթացքը հանգիստ է, հատուկ դեպքեր, բողոքներ չկան թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների կողմից:
Ա. Սարգսյանը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ քննությունների արդյունքների մասին պետք է տեղեկացնել ուսանողներին, իսկ էլեկտրոնային հարթակում ժամանակին և ուշադիր լրացնել քննական տեղեկագրերը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը ձայնը տվեց նիստին ներկա հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Սեյրան Գրիգորյանին, ով ներկայացրեց ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Դոց. Ս. Գրիգորյանը իր խոսքում մասնավորապես նշեց.

Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնը տարվա ընթացքում աշխատանքներ է կատարել ուսումնական գործընթացի զարգացման և թարմացման ուղղությամբ: Ամբիոնի աշխատակիցները կրթական գործին զուգահեռ շարունակել են նաև գիտահետազոտական աշխատանքները, հրատարակել հոդվածներ, մասնակցել գիտաժողովների:

Անցյալ տարեվերջին «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի» դրամաշնորհով տպագրվել է ամբիոնի դոցենտ Ս. Գրիգորյանի «Եղիշե Չարենցը և 20-րդ դարի հայ գրականությունը (Վահան Տերյան, Ավետիս Ահարոնյան)» մենագրությունը: Պատրաստ է պրոֆեսոր Ա. Ավագյանի «Հակոբ Մնձուրի. Կյանքը և գործը» մենագրությունը, որը շուտով կներկայացվի տպագրության: Ասիստենտ Մ. Ղազարյանը աշխատում է Հակոբ Օշականի փոքր արձակի հետազոտությանը նվիրված մենագրությունը:

Ամբիոնի դասախոսները միջազգային, հանրապետական և ԵՊՀ գիտական հանդեսներում տպագրել են բազմաթիվ հոդվածներ:

Պրոֆեսոր Վ. Գաբրիելյանը տպագրել է Չարենցի դիմանկարը ետչարենցյան հայ բանաստեղծության մեջ» հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի», 2024, թիվ 1):

Պրոֆեսոր Ժ. Քալանթարյանը անցյալ տարվա ընթացքում տպագրել է երեք հոդված՝ «Բանաստեղծ գրականագետը» («Բանբեր Երևանի համալսարանի», 2023, թիվ 1), «Եղիշե Չարենցի ստեղծագործությունների արձագանքը 1920-ական թվականների սփյուռքահայ մամուլում» («Գրականագիտական հանդես», 2023, թիվ 1), «Խոսք Մանուկ Աբեղյանի մասին» («Հուշարձան Մանուկ Աբեղյանին» հոդվածների ժողովածու): Տպագրության է հանձնել ևս մեկ հոդված:

Պրոֆեսոր Ա. Ավագյանը տպագրել է «Կենդանիների և բույսերի անձնավորումը Հակոբ Մնձուրու ստեղծագործություններում» («Վեմ» համահայկական հանդես, 2023, թիվ 1), «Փոքր Արմտանի մեծ վկան» («Բանբեր Երևանի համալսարանի», 2023, թիվ 2) և «Մեծ եղեռնի Արմտանի վկան» («Բանբեր Երևանի համալսարանի», 2023, թիվ 3) հոդվածները: Տպագրության է հանձնել երեք նոր հոդված:

Դոցենտ Արմեն Ղազարյանը հրատարակել է «Հայոց ինքնուրույն թագավորության վերականգնման մտադրությունը Վարդանի և Վասակի ծրագրերում (կերպարի մեկնաբանության դեմիրճյանական ինքնատիպությունը «Վարդանանքում»)» հոդվածը («Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 2023, թիվ 4):

Դոցենտ Ս. Գրիգորյանը տպագրել է մեկ հոդված՝ «Արտաշես Հարությունյանի «Ոսկիամայր դիցուհին» բանաստեղծությունը Դանիել Վարուժանին վերագրելու պատմությունը» («Բանբեր Երևանի համալսարանի», 2024, թիվ 1): Տպագրության է հանձնել ևս երկու հոդված, որոնցից մեկը՝ միջազգային գրախոսվող հանդեսում:

Լույս են տեսել դոցենտ Ա. Արզումանյանի «Միջառարկայական կապեր. գրականություն և երաժշտություն» («Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային հանդես, 2023, թիվ 1) և «Ծառապատկերի խորհրդաբանության իմաստային հոսքերը (Հր. Մաթևոսյան – Մ. Գալշոյան – Վ. Պետրոսյան)» («Բանբեր Երևանի համալսարանի», 2024, թիվ 1) հոդվածները: Տպագրության է հանձնել ևս մեկ հոդված:

Դոցենտ Լ. Սեյրանյանը հրատարակել է «Հացահատիկի խորհրդաբանությունը Միհր-Քրիստոս-Փոքր Միհր առնչության համատեքստում» («Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառի պետական համալսարան, 2023) և «Կյանք-մահ, կոսմոս-քաոս, խոսք-կյանք առնչությունները Չարենցի մի շարք երկերի քննաբանման օրինակով» («Գրականագիտական հանդես», 2023, թիվ 2) հոդվածները: Տպագրության է ներկայացրել ևս երեք հոդված, որոնցից երկուսը՝ միջազգային գրախոսվող հանդեսներում:

Ասիստենտ Մ. Ղազարյանը տպագրել է «Տեղագրական պատկերները Հակոբ Մնձուրու պատմվածքներում» («Վեմ» համահայկական հանդես, 2022, թիվ 4) հոդվածը։

2023 թ. նոյեմբերին կայացել է Խ. Աբովյանի անհետացման 175-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, որի ընթացքում Ս. Գրիգորյանը հանդես է եկել «Շարլոտտա Շուլցի կերպարը Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերում և Ե. Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմում» զեկուցումով։ Նույն ամսին կայացել է Էդ. Ջրբաշյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով, որին զեկուցումներով մասնակցել են Ժ. Քալանթարյանը («Էդվարդ Ջրբաշյան գրականագետը») և Ս. Գրիգորյանը («Հատվածի ժանրը Վ. Տերյանի և Ե. Չարենցի պոեզիայում»)։ Երկուսն էլ որպես հոդված տպագրվել են «Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյան 100» ժողովածուի մեջ։

2024 թվականը մեր ամբիոնի դասընթացներում ընդգրկված մի քանի հեղինակների հոբելյանների տարի է։ Լրանում են Ակսել Բակունցի 125-ամյակը, Համո Սահյանի 110-ամյակը, Պարույր Սևակի և Մկրտիչ Սարգսյանի 100-ամյակը։ Մի քանի օր առաջ լույս տեսավ «Սյունյաց երկիր» թերթի մշակութային բացառիկ ծավալուն համարը՝ նվիրված Համո Սահյանի հոբելյանին։ Համարում հոդվածներ ունեն ամբիոնի աշխատակիցներ Ս.Գրիգորյանը և Լ. Սեյրանյանը։ Ամբիոնը այս տարվա աշնանը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ կանցկացնի Պարույր Սևակի 100-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, որի նախապատրաստական աշխատանքները սկսվել են։

Շարունակվել է գիտական կադրերի պատրաստման աշխատանքը մագիստրատուրայում և ասպիրանտուրայում։ Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հետ կազմել ենք 1,5 տարի տևողությամբ «Հայ գրականություն» մագիստրոսական նոր ծրագիրը։ 2023 թ. հունիսի 28-ին ամբիոնի հայցորդ Մարինե Ղազարյանը պաշտպանել է «Հակոբ Օշականի փոքր արձակը (հոգևորի և բնազդայինի խնդիրը)» թեմայով թեկնածուական ատենախոսություն, որի համար ՀՀ ԲՈԿ-ը նրան շնորհել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Տարեվերջին հեռակա ուսուցման մեկ ասպիրանտ և մեկ հայցորդ հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը։ Ամբիոնն ընդունել է նոր հայցորդ, որի ատենախոսության թեման հաստատվել է։

Հաշվետվության վերաբերյալ ելույթ ունեցան, բ. գ. դ., պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. դոց. Ա. Տեր-Մինասյանը, Ա. Ջրբաշյանը և այլք։ Նշվեց, որ հայ նորագույն գրականության և գրաքննադատության ամբիոնը կատարել է մեծ և արդյունավետ աշխատանք գիտակրթական գործունեության կազմակերպման առումով։ Խորհուրդը ամբիոնի կատարած աշխատանքը գնահատեց բարձր։

Ընթացիկ հարցերում՝

1. **ԼՍԵՑԻՆ** - Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Անահիտ Լևոնի Մանուկյանին դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու միջնորդություն տալու հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալակյանը։

Նշվեց, որ ասիստենտ Անահիտ Մանուկյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1992 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ժամանակակից հայ արձակի լեզվի և ոճի հարցեր» թեմայով: Համահեղինակ է 2015թ. տպագրված «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական առաջադրանքների ձեռնարկ» ուսումնամեթոդական աշխատանքի: Հրատարակել է 5 գիտական, 1 մեթոդական հոդված և 1 թեզիս: 1991 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում որպես ասիստենտ:
«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցհարցման արդյունքը 4.4 միավոր է:
Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Անահիտ Մանուկյանին՝ մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Անահիտ Մանուկյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի կոչում շնորհելու գործընթացին:

2. **ԼՍԵՑԻՆ –** Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Սուսաննա Վոլոդի Գաբրիելյանին դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Տեր-Մինասյանը, Զ. Աղաջանյանը:

Նշվեց, որ ասիստենտ Սուսաննա Գաբրիելյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1988թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Սովետահայ պոեզիան 1930-ական թթ. առաջին կեսին (զարգացման միտումներ և ուղղություններ)» թեմայով: Համահեղինակ է 2016 թ. տպագրված «Հայոց լեզվի գործնական առաջադրանքների ձեռնարկ» և 2022 թ. տպագրված «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (դասագիրք բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար) ուսումնամեթոդական աշխատանքների: Հրատարակել է 13 գիտական, 1 մեթոդական հոդված և 3 թեզիս: 1993 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:
«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցհարցման արդյունքը 4.7 միավոր է:
Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Սուսաննա Գաբրիելյանին՝ մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Սուսաննա Գաբրիելյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի կոչում շնորհելու գործընթացին:

3. **ԼՍԵՑԻՆ –** Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Հրաձին Գրիշայի Սարգսյանին դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալակյանը:

Նշվեց, որ ասիստենտ Հրաձին Սարգսյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1991թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Անհատի

ձևավորման պրոբլեմը սովետահայ ինքնակենսագրական վեպում» թեմայով: Համահեղինակ է 2005թ. տպագրված «Գերմաներեն-հայերեն բառարան գործարարների համար (տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար)» բառարանի: Հրատարակել է 6 գիտական և 2 մեթոդական հոդված: 1993 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:
«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցհարցման արդյունքը 4.4 միավոր է:
Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Հրաձին Սարգսյանին՝ մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Հրաձին Սարգսյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի կոչում շնորհելու գործընթացին:

4. **ԼՍԵՑԻՆ –** Բանասիրական գիտությունների դոկտոր, հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Փառանձեմ Գառնիկի Մեյթիխանյանին պրոֆեսորի կոչում շնորհելու միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալակյանը:
Նշվեց, որ Փառանձեմ Մեյթիխանյանը 1991 թվականից աշխատում է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնում՝ ծավալելով գիտամանկավարժական արդյունավետ գործունեություն: 1990 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայերեն նոր բառերի քննությունը (բառարանագրական նյութի հիման վրա)» թեմայով: 2017 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Աստվածաշնչի հատկանվանաբանություն» թեմայով: 2004 թ.-ից հայոց լեզվի ամբիոնի դոցենտ է:
Տպագրել է գիտական բազմաթիվ ուսումնասիրություններ՝ 12 ուսումնամեթոդական աշխատանք, 6 մենագրություն, 30 հոդված: Հեղինակ է բառարանների, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված դասագրքերի: Փ. Մեյթիխանյանը արժանացել է կառավարական պարգևների՝ ՀՀ նախագահի և վարչապետի շնորհակալագրերի:
«Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4. 67 միավոր է:
Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Փառանձեմ Մեյթիխանյանին մասնակցելու պրոֆեսորի գիտական կոչման համար սահմանված ընթացակարգին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Փառանձեմ Մեյթիխանյանին երաշխավորել մասնակցելու պրոֆեսորի կոչման համար սահմանված գործընթացին:

5. **ԼՍԵՑԻՆ –** ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Սարգսյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալակյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության նոր դասագիրք կազմելը անհրաժեշտ էր։ Յու.Ավետիսյանի գիրքը շատ հաջողված աշխատանք է, արժեքավոր է, նոր, սպասված։ Գրքի մեծ առավելությունն այն է, որ ծավալով փոքր է, բայց ընդգրկուն, ոչ մի բաժին դուրս չի մնացել։ Էլեկտրոնային հարթակում գիրքը 2 տարի փորձարկվում է, օգտագործվում է հայ բանասիրության ֆակուլտետի ուսումնական գործընթացում Մ.Ասատրյանի գրքին զուգահեռ։
Աշխատությունը արժանի է անհապաղ հրատարակվելու։ Առաջարկվեց աշխատությունը դարձնել դասագիրք։

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» գիրքը՝ որպես դասագիրք, երաշխավորել տպագրության։

6. ԼՍԵՑԻՆ – Բ. գ. թ., դոց. Գաղթուհի Կարապետի Հանանյանի «Բառարան Սվեդիայի բարբառի (Խտրբեկի խոսվածք)» բառարանը հրատարակության երաշխավորելու հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Սարգսյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը։
Նշվեց, որ հետմահու տպագրության հանձնվող այս բառարանն ունի և՛ լեզվաբանական արժեք, և՛ պատմական, ազգագրական, հայերենագիտական լուրջ կարևորություն, որովհետև մոռացության և կորստի ճիրաններից փրկել է մի ողջ տարածաշրջանի նախորդ դարերի բառագանձը՝ հնարավորինս ճշտված և ամենաընդհանուր իմաստներով։ Բառարանը տալիս է ուսումնասիրության մեծ նյութ՝ հասկանալու այդ տարածաշրջանի մարդկանց կենցաղը, սովորույթները, ապրելակերպը, հավատալիքները։ Չնայած հայերենում ունենք Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարանը», շուրջ մեկ տասնյակ առանձին բարբառների բառամթերքին նվիրված աշխատություններ, բայց Գ. Հանանյանի բառարանը աննախադեպ է բառերի շարահյուսական կիրառության օրինակներով և դրանց արևելահայերեն փոխադրումներով։ Բառարանի բառամթերքը ներկայացնելով՝ Գ. Հանանյանը նաև հսկայական նյութ է տալիս Խտրբեկի խոսվածքի հնչյունական, քերականական իրողությունների նկարագրությամբ, որը դասագրքային արժեք կարող է ձեռք բերել «Բարբառագիտություն» առարկան ուսումնասիրողների համար։ Այն նաև ուսումնասիրության լայն ասպարեզ է բացում օրեցօր ավելի զարգացող համեմատական բարբառագիտության համար. բարբառների համեմատական ուսումնասիրության համար ծնում է բազմաթիվ կենսական հարցեր՝ ինչպե՞ս են առաջացել նշված լեզվական իրողությունները, արդյոք դրանք եզակի՞ են մեր բարբառներում, թե՞ ունեն իրենց զուգահեռ ձևերը այլ բարբառներում, ինչպիսի՞ հնագույն լեզվական իրողություններ կան պահպանված դրանցում և այլն։
Բառարանի վերաբերյալ առկա են դոց. դոց. Ն. Դիլբարյանի, Ս. Գրիգորյանի և Ա. Կարապետյանի դրական կարծիքները, գրքի գիտական խմբագիրն է Հ. Չոլաքյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ – Գ. Հանանյանի «Բառարան Սվեդիայի բարբառի (Խտրբեկի խոսվածք)» բառարանը երաշխավորել տպագրության։

7. **ԼՍԵՑԻՆ** – Բ. գ. թ., դոցենտ Ռուզաննա Ալեքսանդրի Սարգսյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը:
Նշվեց, որ Դինա Ռուբինայի ստեղծագործության քննությունը մշտապես արդիական է: Ռ. Սարգսյանը հանգամանալից տեղյակ է թեմային, երկար ժամանակ զբաղվել է դրա ուսումնասիրությամբ և ցանկանում է այն շարունակել որպես դոկտորական ատենախոսության թեմա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Բ. գ. թ., դոցենտ Ռուզաննա Ալեքսանդրի Սարգսյանի դոկտորական ատենախոսության թեմա հաստատել՝ «Դինա Ռուբինայի վիպական շարքերի միֆապոետիկան»՝ Ժ 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ